Հաւուց Թառի փակակալն է՝ ըստ 1214 թուի յիշատակարանի՝ «Յակոբ ընտիր քահանայ», որ հաւանօրէն արձանագրութեան մէջ յիշուած Յովհաննէս քահանայի յաջորդն էր և



Պատկեր 13

Պարսպից դուրս՝ արեւելեան գերեզմանատնը․

որի գերեզմանին տափակ քարը գտնւում է դէպի բլրի եկեղեցին տանող ճանապարհի վերայ, մեծ աւերակների և այս տաճարի մէջ․ «Յակոբ [ Ճաճաճ [ ա յիշ [ եա» ։ Եղիայի հեղինակութեան և հաչակին ապացոյց կարող է լինել և այն հանգամանքը, որ Թովմա Մեծոփեցին իւր աշակերտակից վարդապետների հետ Յովհաննէս Մեծոփեցուն թաղում են «ի հանգստարանի Նոր վկային Յովսէփայ և Եղիա վարդապետին ի մեծահանդէս ուխտն Հայոց Թառ»(1)։

Սարգիս քահանան 1211 թուին բլրի վե-

(1) Թովմա Մեծոփեցի․ Փարիզ․ 53, 61։